**ՔԱՂՎԱԾՔ**

**քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/7562/02/24**

**Վ Ճ Ի Ռ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ**
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

2025 թվականի դեկտեմբերի 26-ին Երևան քաղաքում

նախագահությամբ՝ դատավոր Ա. Դունամալյանի

քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերության (գրանցման համար՝ 278.110.03080, ՀՎՀՀ՝ 00435781) ընդդեմ պատասխանող «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Ագաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 344 հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Վ Ճ Ռ Ե Ց**

**1.** «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Ագաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 344 հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

**1.1.** անվավեր ճանաչել «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի 16.08.2024թ.՝ ««ԱԳԱՍՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 344 հրամանը:

(...)

**2.** Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

**3.** Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝** **Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ**

ՀԱՍՏԱՏԵՂԾԸ Է
ԴԱՏԱՎՈՐ Ա.
ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ